

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Բաց Բաժնետիրական Ընկերություն





ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am

Հաշվետվություն թիվ 26, 13.05.11թ.


տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս, պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,192,401 հատ, 25,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ, 10,000 ՀՀ դրամ

"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթուրել փաստաթղթի ամբողջականությունը":

ստորագրող անձինք՝

Գարիկ Ադամյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.05.11թ. (ամսաթիվ)
Տիգրան Գալստյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ- Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.05.11թ. (ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.05.11թ. (ամսաթիվ)
Արթուր Հակոբյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	13.05.11թ. (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

Աշոտ Օսիպյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	13.05.11թ. (ամսաթիվ)
-----------------------------------	---	--	-------------------------

13 մայիսի 2011 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ 08/07Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ



Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 հօմ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

« 11 » մայիսի 2011թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 08/07L

ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը, հաշվի առնելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) 2011 թվականի բյուջեով նախատեսված պարտատոմսերի թողարկման ծավալները, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21⁶-ի 1-ին մասի ժգ) կետը, Բանկի կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Թողարկել պարտատոմսեր 250.000.000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 25.000 (քսանհինգ հազար) հատ, 24 (քսանչորս) ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 12 (տասներկու) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, արժեկտրոնային պարտատոմսեր:

2. Տեղաբաշխումն իրականացնել անվանական արժեքով բաց բաժանորդագրությամբ՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաբաշխումը սկսել ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկման ազդագիրը գրանցելուն հաջորդող շաբաթվա առաջին աշխատանքային օրվա ժամը 09:00-ին և ավարտել տեղաբաշխման սկզբին հաջորդող 15-րդ աշխատանքային օրվա ժամը 16:00-ին:

3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտը բաժանորդագրության ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու և հետ կանչվող հայտերի բացակայության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

4. Սահմանել, որ պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

5. Արժեկտրոնային եկամտի գումարը վճարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:

6. Պարտատոմսերի մարումը կատարել Բանկի կողմից տեղաբաշխման ավարտի օրվանից հաշվարկված 24 (քսանչորս) ամիս անց: Մարման գումարը վճարել պարտատոմսերի մարման օրվա նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:

7. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2009 թվականի հունիսի 17-ի թիվ 14/4 որոշմամբ հաստատված «Արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ



Բ.Բեգլարյան